Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-542[11]-31.03.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում «լիազոր մարմնի» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը, փոխարինել «տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով՝ «ե) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «է», «ժ», «ի», «իգ» և «իե» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքում 17-րդ հոդվածից հետո լրացնել նոր 17.1-րդ հոդվածով.

«Հոդված 17.1. Տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասությունները

1. Տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասություններն են.

1) սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգադրագրի արձակումը.

2) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վարչական վարույթի իրականացումը.

3) սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը.

4) օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում
Կ-542[11]-31.03.2020-ՏՀ-011/0
Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-204-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում «լիազոր մարմնի» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը, փոխարինել «տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ե» կետով՝ «ե) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:»

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «է», «ժ», «ի», «իգ» և «իե» կետերն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքում 17-րդ հոդվածից հետո լրացնել նոր 17.1-րդ հոդվածով.

«Հոդված 17.1. Տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասությունները

1. Տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի իրավասություններն են.

1) սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված կարգադրագրի արձակումը.

2) տեխնիկական անվտանգության ապահովման բնագավառում վարչական վարույթի իրականացումը.

3) սույն օրենքի 21-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումը.

4) օրենքով սահմանված այլ լիազորություններ:»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: